№ 137 Օգոստոսի 7 (19) 1880 Օգոստոսի 7 (19) № 137

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փակված դպրոցներ։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Բաթումից։—Արտաքին տեսութիւն։ Անգլիական պարլամենտ։ Անգլիա։— Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Բժշկի խորհուրդները։

ՓԱԿՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐ

Ով որ ծանօթանում է մեր հայոց հասարակական գործիչների հետ, նկատում է առհասարակ նրանց մէջ մի ընդհանուր գիծ նրանց բոլորի բնաւորութեան մէջ։ Մեր գործիչների մեծ մասը որ և է բարձր հասարակական ազնուացնող իդէալից զուրկ, ինչին, բամբասասէր, մանր բաների ետևից ընկնող մարդիկ են, աւելի անձնական գործերով զբաղվող, ուրիշների անձնական, ընտանեկան կեանքը քքքրող և ոչ թէ հասարակական ընդհանուր շահերը կշռող և քննադատող անհատներ են։ Հետաքրքիր է հետազօտել թէ ի՞նչին պէտք է վերաբերել այդ զզվելի և հակահասարակական յատկութիւնը մեր գործիչների մեծ մասի, մեր ինտելիգէնցիայի մէջ։

Մեր կարծիքով այդ յատկութիւնը պատաստած է մեր ինտելիգէնցիային մեր փակված դպրոցներով, որոնցից մեծ մասամբ դուրս են եկել մեր գործիչները։ Մեր հասարակական գործիչների մեծ մասը՝ խմբագիրներ, մանկավարժներ, բժշկներ, քահանաներ, վարդապետներ, աստիճանաւորներ, դերասաններ,—իրանց կրթութիւնը ստացել են փակված դպրոցներում, այն է Ներսիսեան դպրոցում, Լազարեան ճեմարանում և Խալիպեան դպրոցում։ Իսկ փակված դպրոցների բարոյական և մտաւոր ներգործութիւնը մարդու բնաւորութեան կազմվելու վրա, յայտնի է ամենքին։ Փակված դպրոցը զրկում է աշակերտին կեանքի փորձառութենից, դատապարտում է մարդու մտաւոր զարգացումը մշտական մանկութեան և անչափահասութեան, զուրկ է թողնում նրան մի որ և է բարձր իդէալից կեանքի մէջ, բացի սորանից դարձնում է մարդուն մի չնչին, մանր բաների ետևից ընկնող, իր ընկերների չնչին պակասութիւնները քքքրող էակ, հակահասարակական մի քանի ախտեր ունեցող, ծաղրելի, դարդակ, աշակերտական սովորութիւններին ընտելացած մի արարած....

Ինչպէս փակված դպրոցում, գիշերօթիկ լինելու ժամանակ, զուրկ հասարակական որ և է յարաբերութեան և բարձր, լուրջ գաղափարների, տարիներով ապրելով մի նեղ սահմանափակ շրջանում, իր ամբողջ ուշքը դարձնելով իր չորս կողմ եղած չնչին, մանր պակասութիւնների վրա, մանրակրկիտ դառնալով, զբաղվելով ներքին բամբասանքներով, մանր կռիւներով, միակ մխիթարութիւն գտնելով ուրիշի ֆիզիկական պակասութիւնների ծաղրելու մէջ և իր թէ ընկերներին և թէ վարժապետներին ծաղրելի, աշակերտական հանաքներ և տհաճութիւններ անելու մէջ,—նոյն աշակերտական, մշտապէս անչափահաս բնաւորութիւնը մարդը իր հետ բերում է և համալսարան, մտնում է և կեանքի մէջ։

Դպրոցում, աշակերտ լինելու ժամանակ, նա ծաղրում էր այս ինչ ընկերոջ, որովհետև նա մարմնական մի որ և է պակասութիւն ունէր, ածում էր թանաք այն վարժապետի գլխարկի մէջ, որի դասերը չէր սիրում, կտրում էր այն ընկերոջ զգեստի թևքը, որի հետ թշնամի էր, ճանճերով էր լցնում այն ընկերոջ թէյի բաժակը, որին ատում էր և այլն,—նոյն կեանքի եղանակը, նոյն սովորութիւնները աշակերտը կը պահպանի, երբ համալսարանի ուսանող կը դառնայ, երբ կեանքի մէջ կը մրտնի. միայն այդտեղ նա աւելի ընդարձակ կերպով կը վարի իր ինտրիգանները, լում կը տայ իր թշնամական, վրէժխնդրական զգ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

4) Խօսենք բժշկի վարձատրութեան մասին։ Զեղնից շատերը կը կարծեն, որ փողի մասին խօսելը անյարմար է, բայց ես կարծում եմ, որ ամեն հարցի վրա կարելի է, նաև երբեմն հարկաւոր է խօսել. որովհետև խօսելով միայն կարող է հարցը պարզվել, մանաւանդ փողի հարցը։ Փողի վրա խօսելը ամենից դժուար է, որովհետև հարցը քնքոյշ է և պահանջում է ճիշտ և արդար դատողութիւն։ Փողի գործում խաբել մի հայի, անկարելի է, ուրեմն չէք կարող կարծել, որ ես դիտաւորութիւն ունեմ սխալ խօսել։ Ես կաշխատեմ ամենաարդար, ազնիւ և անկողմնակի կերպիւ խօսել. դատաւորները դուք էք։ Մենք բոլորս աշխատում ենք, ուրեմն բոլորս էլ մշակներ ենք։ Օրինակներով բացատրեմ հարցս. դուք մշակ էք բռնում և օրեկան վճարում էք. եթէ չը վճարէք նա չի գայ ձեր գործը կատարելու, նա պարտաւոր չէ ձեզ համար ձրի աշխատելու։ Բայց պահանջում էք բժշկից ձրի բժշկել ձեր հիւանդին, այսինքն ձրի աշխատել ձեզ համար. նա ինչ պարտաւոր է։

Դուք վաճառական էք, ծախում էք ապրանք և ստանում էք ձեր ցանկացած և նշանակած տոկոսը, որ է ձեր աշխատանքի վարձը։ Ի՞նչի բժիշկը ձեզ համար անվարձ պէտք է աշխատի։ Դուք կանչում էք բժշկին հիւանդի մօտ, պատուէրները չէք կատարում ինչպէս հարկն է, հիւանդը մեռնում է, մեղադրում էք բժշկին և չէք վարձատրում։ Եթէ ձեր հիւանդը մեռաւ, միթէ կարծում էք որ բժիշկը չաշխատեց Նրան առողջացնելու։

Դուք կանչում էք բժշկին հիւանդի մօտ. այդ հիւանդը այնպէս տկարակազմ կամ այնպէս ծեր է, որ չէ կարողանում դիմանալ հիւանդութեանը, մանաւանդ որ բժշկի պատուէրները չէ կատարում. հիւանդը մեռնում է, և մեղադրում էք բժշկին, միթէ կարծում էք որ բժիշկը չաշխատեց Նրան առողջացնելու, այդ դէպքում էլ բժշկին չէք վարձատրում։ Դուք հրաւիրում էք բժշկին հիւանդի մօտ, հիւանդը առողջանում է, բժիշկը մեծ մասամբ չէ վարձատրվում, իսկ եթէ նա վարձ է պահանջում, դուք անբաւական էք լինում և ասում էք այստեղ այնտեղ. «ինչ անամօթ ու անպիտան մարդ է», կամ խոստանում էք ասելով «ես յետոյ կը վճարեմ», սակայն երբէք չէք վճարում։ Իսկ եթէ վճարում էք, աշխատում էք պակսեցնել. միթէ բժիշկը պարտաւոր է անվարձ կամ պակաս վարձով (իրեն նշանակածից) աշխատել ձեզ համար։ Եւրոպական հասարակութեանց մէջ բժշկի դրութիւնը համեմատաբար աւելի լաւ է, քան թէ մեզնում։

Եթէ բժշկի հետ տարով են խօսել, նա տարվայ սկզբին ստանում է իր ռոճիկը գերդաստանից, եթէ վիզիտով է գալիս ամենայն անգամ առանձին են վճարում, կամ թէ բժշկելուց յետոյ, բժիշկը վիզիտների հաշիւը ուղարկում է հիւանդատէրին և նշանակած գումարը ստանում է, մեծ մասամբ առանց այլայլութեան, իսկ եթէ չեն կամենում վճարել, նա պահանջում է դատաստանով, ինչպէս իր պարտատէրից։

Ցեսենք թէ հասարակութիւնը ինչ իրաւունք ունի բժշկին ամեն րոպէ անհանգստացնել, գիշեր թէ ցերեկ, քաղցած թէ յոգնած, շողին թէ ցրտին, փոքր ինչ տկար, թէ հարսանիքից. պահանջում է թէ՝ բժիշկ, արի հիւանդիս տես (երբեմն էլ ոտով), բայց եթէ իր բնակարանը յանկարծ քանդվում է, ուստի և մշակներին չէ ասում՝ եկէք տունս շուտ շինէք, ձմեռ է, ապրելու տեղ չունեմ, կամ թէ անբաղդութիւն պատահելիս չէ ասում՝ փաստաբան, արի վաղվանից սկսի պատրաստվել ինձ պաշտպանելու դատաւորի առջև, որովհետև տնով տեղով կորչում ենք. կամ թէ երբ վաճառականը քէֆ է անում, չէ ասում, արի շուտ դուքանդ բաց արա, մահուդ տուր այս րոպէիս չոր պէտք է կարել տամ. տկլոր եմ, ձմեռ է, կը հիւանդանամ, կը մեռնեմ։ Հասարակութիւնը միայն այն ժամանակ այդպէս պահանջ կարող է անել, եթէ բժիշկը նրա հաշվով գիմնազիայում կրթված լինէր և համալսարանում բժշկութիւն ուսած լինէր։ Օրինակ, դերձակի աշակերտութեան ժամանակ, ես չեմ հոգացել նրա մասին, ինչպէս կարող եմ պահանջել, որ նա ամբողջ օր աշխատելուց յետոյ գիշերը անքուն մնայ և ինձ համար շոր կարի այն էլ ձրիաբար, որովհետև հակառակ դէպքում ես էքուց շոր չեմ ունենալու, որովհետև ես տրկլոր մարդ պէտք է գամ, կամ որովհետև ես կարող եմ հիւանդանալ։ Եթէ ես կամենում եմ դիտութիւն սովորել, միթէ իրաւունք ունեմ մի վարժապետից պահանջել որ նա ինձ ձրիաբար դաս տայ, օրը քանի անգամ էլ ցանկանամ, և երբ կամենամ, նա պատրաստ լինի ինձ դաս տալու, առաջ բերելով թէ տգէտ մնայն ինձ համար մահից վատ է։ Բայց իմացէք, պարոններ, որ իրաւունք ճանաչելը անհրաժեշտ է ամեն մարդու համար։ Բոլոր դասակարգի մարդկանց հետ իրաւունքով են բան բռնում, բայց բժշկի վերաբերմամբ մեր հայերը իրաւունք չեն ճանաչում։ Ցեսնում էք, որ ձեր պահանջը բժշկից անիրաւ է, բժիշկն երբէք չէ հրաժարվում ձեզ օգնել ինչպէս փաստաբանը, ուստէն և այլն։ Բայց նա պահանջում է միայն վարձատրութիւն, ոչ թէ անպատճառ, կամ շուտ բժշկելու համար, այլ նրա համար որ ինչքան կարողանում է՝ աշխատում է։ Պէտք է իմանալ որ բժշկի համար պարծանք է և մեծ ուրախութիւն բժշկել հիւանդին, ինչքան կարելի է շուտ և յաջողակ, բայց երբեմն բժշկի այս ցանկութիւնը նրանից դանդաղ անկախ պատճառներով չէ իրագործվում։ Հասկանալի է, որ երբէք չը պէտք է կարծել որ բժիշկը ցանկութիւն չունենայ շուտով բժշկելու իր հիւանդին, եթէ հիւանդը չէ բժշկվում. սրա պատճառները կարող են լինել հետևեալները։

1) Բժշկի պատուէրները չեն կատարում, երբեմն չնչին պատճառներից է կախված հիւանդի բժշկվելը. լաւ գիտցէք, որ եթէ բժշկի պատուէրները իր ժամանակին չը կատարէք, հիւանդութիւնը այն ժամանակ դառնում է անբուժելի, օրինակ թոքի բորբոքում, որ կարող է դառնալ բարակացաւ։

2) Երբեմն հիւանդի կազմվածքը թոյլ է լինում և չէ կարողանում դիմանալ հիւանդութեան։

3) Երբեմն դեղատունը տալիս է հին, իր ուժը արդէն կորցրած դեղ, որ, ի հարկէ, չէ ներգործում ցաւի դէմ։

4) Հիւանդի բնակարանը մեծ նշանակութիւն ունի, որ շատ անգամ անյարմար, նաև վնասակար է (խոնաւ, կամ ցուրտ) այդ դէպքում յաջողակ բժշկելն անկարելի է։

5) Շատ անգամ ցաւը լինում է անբժշկելի, օրինակի համար բարակացաւը։

6) Արդարութեան համար խոստովանում եմ, որ տարաբաղդաբար երբեմն բժիշկն ինքն է մեղաւոր լինում, որ հիւանդը չէ առողջանում, որովհետև չը կարողացաւ հասկանալ նրա հիւանդութիւնը։ Բժիշկը Աստուած չէ. նրան ամենագէտ չը պէտք է կարծէք, բայց պէտք է աւելացնեմ, որ ցաւը չը հասկանալը շատ սակաւ է պատահում, որովհետև դժուար դէպքում բժիշկը պրտռում է գրականութեան մէջ, թէ այդ հիւանդութիւնը ինչից է գոյանում և ինչպէս պէտք է յաջող բժշկել, կամ թէ խորհրդակցում է ընկերակից բժիշկների հետ, հրաւիրում է, ցոյց է տալիս հիւանդին և նրանց միաբան խորհրդով հիւանդութիւնը որոշում են և այդ որոշումին համաձայն դեղ ու դարման անում։ Պէտք է գիտենաք, որ բժիշկը դիպլոմ ստանալու ժամանակ, նա երդվում է, որ ամենայն դժուար դէպքում նա իրեն պարտաւոր է համարում օգնութիւն կանչել իր ընկերներին, խորհրդակցել նրանց հետ, և եթէ ընկերն է կանչում, գնալ իր կարծիքը ու հմտութիւնը հաղորդել։ Եթէ նա չերդվեր էլ, այնուամենայնիւ վերոյիշեալ կերպիւ պէտք է վարվեր, որովհետև մարդկային զգացմունքը և իր օգուտը այնպէս են պահանջում. օրինակի համար երկու մարդ տիֆ են ստանում, երկուսին էլ մի և նոյն բժիշկն է բժշկում մի և նոյն կերպիւ և դեղերով, որոնցից մէկը առողջանում է, միւսը մեռնում. միթէ բժիշկն է մեղաւոր.—այստեղ մեղաւոր են կամ հիւանդի կազմվածքը, կամ նրա առողջապահական հանգամանքները, նրա պահողները։

զացմունքներին, բաւականութիւն կը տայ իր հնչին, մանր բնաւորութեան անսանձ պահանջներին։

Մինչև սպիտակ մազերը, մինչև գերեզմանը նա մնում է բնաւորութեամբ անչափահաս աշակերտ, շկօլնիկ, մանր, ողորմելի ինտրիգաներ և թշնամութիւններ վարող, նախանձոտ էակ, զուրկ բարձր իդեալներից, լայն գաղափարներից, ամեն գովելի բանին նախանձող և փնասող մարդ, կարճատես մտածող, մանր պակասութիւններ քքքրող և խոշոր պակասութիւններ չը նկատող, ուրիշի ընտանեկան կեանքին դիպչող և նրա հասարակական գործունէութիւնը գնահատել անկարող մարդ....

Փակված դպրոցի աշակերտական կեանքը իր անջնջելի դրոշմով դրոշմել է նրա բնաւորութիւնը ամբողջ կեանքի համար։

Եւ ահա այդ բոլոր մարդիկ, զուրկ որ և է բարձր հասարակական գաղափարից, հեռու մեծացած ընտանեկան կեանքից, ընտանեկան հսկողութիւնից և նրա բարերար ազդեցութիւնից, իրանց հասակակից տղամարդիկների չոր ու ցամաք շրջանում կրթված, մանր և չնչին էակներ՝ նրանք ապագայում դառնում են հասարակական գործիչներ մեզ մօտ....

Հասկանալի է, ուրեմն, թէ ինչ կը լինի այն հասարակութիւնը, որ առաջնորդվում է այդ տեսակ գործիչներով, որոնք արդիւնք են այլանդակ, հիւանդոտ, հրէշաւոր, անբնական հիմնարկութեան, որին անուանում են փակված դպրոց։

Եւ բաւական չէ որ մեր գործիչների մեծ մասը իրանց կրթութիւնը ստանում էին փակված դպրոցներում, որոնք ժամանակակից մանկավարժութեան մէջ համարվում են հնացած, փնասակար, անժամանակակից հիմնարկութիւններ, — մեր արդէն եղած այդ դպրոցներին դարձեալ աւելացաւ մի փակված դպրոց, որ աւելի էլ հեռու է հասարակական կեանքից, աւելի էլ առանձնացած է, քան թէ մինչև այժմ եղածները։ Դա Լչմիածնի ճեմարանն է։

Կարող ենք երևակայել թէ ինչ հրէշներ կընծայի նա մեզ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Օգոստոսի 3-ին

Ահա երկու տարին լրանում է երբ Բաթումը անցաւ ռուսաց իշխանութեան ներքոյ։ Կարծես ամենայն կողմից ամեն դասակարգի ժողովուրդ վաղուց սպասում էր այդ՝ դուշակելով Բաթումին երևելի ապագայ, առաջին վաճառական քաղաք լինելուն։

Թափվեցան իսկոյն վաճառականներ, դանդաղ ընկերութիւնների ներկայացուցիչներ, արուեստաւորներ, գիւղացիներ, և մանաւանդ թափվեցան բաղդախնդիր աստիճանաւորներ, պարապ և անգործ իշխաններ, իւրաքանչիւրի ձեռին մի ծանօթագիր այս և այն նշանաւոր ազգականներից մի որ և է պաշտօն ձեռք բերելու համար, և այսպէս կարճ մէջտեղում Բաթումը դարձաւ մի խաօս խառնիճաղանճ և պէս պէս ժողովրդի։ Վաչխառու վաճառականները չտատեցին վարձել հարիւրապատիկ գներով մահմետական վրացի բէգերի հոտած տները, դոմերը, դարմանատները և չուտով կարկատելով հարիւր մի տեղ քակված պատերը, ծուխից սևացած օճորքը թղթերով ծածկելով և մի կերպ գեղեցկացնելով՝ մագազիններ, հիւրանոցներ և գինեաներ պատրաստեցին մէկին հարիւր վաստակելու մտքով։ Ըստ երևոյթին կարծում էին թէ՝ իբաւ Բաթումը այնպէս է առաջանում, որ բոլոր եկած բաղդախնդիրների գրպանները ոսկով պիտի լցվեն։—Պատերազմից նոր դարձած օֆիցերները չռայլութեամբ վատնում էին այս և այն միջոցով ձեռք բերած փողերը ուրախ և զուարթ կոնծելով պօրտօ-ֆրանկօ՝ Բաթումի արժան շամպանիա գինին։ Հիւրանոցի տէրերն էլ յափշտակվելով ռուս օֆիցերների առատաձեռնութեամբ աւելի և աւելի զարդարում էին հոտած հիւրանոցները, վաճառականները աւելցնում էին խանութների թիւը, այնպէս որ մրգեվաճառը, կերակուր պատրաստողը, հացթուխը և այլն իրենց վերջին կոպէկները ծախսեցին մանր փայտեայ խրճիթներ չինելու պօլիցիայից նշանակած տեղերում, յայտնի վճարքով յօգուտ քաղաքի և այսպէս կարճ ժամանակում ունեցանք ուտելեղէնների ահագին փայտաչէն բազար, հազար և մէկ հիւրանոց ու խանութներ թւով այնքան, որքան հոգի չը կար Բաթումում, ինչպէս վերջին անգամ հաշուեցին։

Քանի մի ամսից յետոյ աշխուժութիւն տուող Բաթումը նուազեց ժողովրդից, առևտուրը բոլորովին դադարեց։ Տարեկան 100 ղուրուշ արժեցող տունը (թուրքի ժամանակ), որ վարձել էին մինչև 2000 ռուբլով, այսպիսիները ամենքից առաջ գրպանները թափ տալով փախան, դալիս էին դոցա տեղ ուրիշները, նոյն կերպով վարձում և նոյն կերպով մնանկանալուց յետոյ փախչում էին։

Այսպիսի անհամերաշխ, անկանոն գործերի հետանքը բնականապէս այն եղաւ, որ չրջմօլիկ վաճառականների պատերազմում վաստակած փողերը՝ բոլորը անցան Բաթումի կալուածատէրերի ձեռքը, որոնք երազով չէին տեսած ռուսի թղթադրամի կապոցը, որ մեծ հաւատարմութեամբ ընդունում էին թուրք կայմէի փոխարէն։ Իսկ մեր վաճառականները հառաչելով և իրանց խաբված տեսնելով, խեթում էին աչքերը Բաթումի վրա ու անիծելով հեռանում էին։ Ներկայումս Բաթումի այդ աննախանձելի դրութիւնը աւելի սաստկանում է և օրից օր Բաթումը ամայանալու վրա է։ Աւելացրու սրա վրա և դժգոհ ժողովրդի գաղթելը։ Բաթումի նահանգը, որի բնակիչները վրացի-մահմետականներ են, բոլորը մեծ դժգոհութեամբ գաղթում են Տրապիզոնի և Բրուսայի շրջակայքը. ինչպէս լսեցի ժողովրդի կէս մասը արդէն գաղթել է և դեռ շարունակում են գաթել։ Ի՞նչ անեն այն հին՝ թւով աւելի շատ խանութպանները, որոնց առևտուրը այդ գաղթող աջարացիների հետ է. կարծիք չը կայ, որ այս ահագին Աջարա ասված բազարը, որ Բաթումի մի հին բաղն է կազմում, կամայանայ բոլորովին և քաղաքիս մեծ դժուարութիւն կը լինի այդ անճոռնի և տգեղ չինութիւնները վերանորոգել տալ կամ գնել, երբ պարապ և անգործ կը մնան։ Աջարացոց գաղթել սկսելուց յետոյ օրէ օր աւելի թանդանում են անհրաժեշտ ուտելեղէնները, օրինակ ձուն, հաւը, միսը, ածուխը և այլն, այնպէս որ քիչ ժամանակից յետոյ շատ կը դժուարանայ մեր բաթումցոց ապրուստը։ Ծովի ալեկոծութեան պատճառաւ երբեմն 10 օրով ոչ մի քաղաքի հետ հաղորդակցութիւն չէ ունենում և այդ միջոցում ուտելու ոչինչ չէք գտնի այստեղ,—որպէս մի կղզիացած «Սահարայում»։ Ինչ կարելի է սպասել այսպիսի մի քաղաքից, որ իրան կերակրել անկարող է և սպասում է ուրիշ քաղաքներից։ Իր շրջակայքում ոչինչ չունի արտահանելու և ոչ քաղաքում ծախելու բացի քանի մի մրգեղէններ, իսկ ժողովուրդը դեռ կիսավայրենի դրութեան մէջ և պարապմունքը լոկ աւազակութիւն և մարդասպանութիւն է, ուտելիքն էլ մրայն ճաղի է (կուկուրուզ) և լոբի։ Ահա այսպէս, մեր երևելի և հռչակված Բաթումը գտնվում է իր վաճառականութեամբ աւելի վատթար դրութեան մէջ, քան սպասում էինք, քան թէ սկզբներումն էր։ Աւելցան տէրութեան քանի մի չինութիւններ և միայն տէրութեան պաշտօնեաների տներ, որոնց մասին ուրիշ անգամ կը գրեմ։ Հայերս ունենք այստեղ մի փայտաչէն եկեղեցի, որ չինվեցաւ չնորհիւ տեղիս արժանապատիւ Տէր-Կոնստանտին Տէր-Ստեփանեանի և տարայոց ու օրիորդաց ուսումնարան։ Հայերի թիւը (լուսաւորչական) հասնում է 400 հոգու, որոնց մեծ մասը Տրապիզոնից վաճառականներ են։ Ուսումնարանը կառավարում են հինգ հոգաբարձուներ, որոնք յանձն են առել ժողովրդից ամսական վճարք (իւրաքանչիւրի կարողութեան համեմատ) ժողովել, կամ ուրիշ մի այլ միջոց փնտռել։ Ցաւոք սրտի պէտք է ասեմ, որ մեր տաճկահայ եղբայրները բոլորովին անտարբեր են մնում դէպի ուսումնարանը և եկեղեցին։ Խեղճ ռուսիացի

երկու մարդոց ոտքը կոտրվում է, ծանր կոտրվածքը առողջանում է, իսկ թեթև վնասվողը մեռնում է, թէպէտև բժիշկն երկուսին էլ միակերպ էր բժշկում։

Զարմանալին այն է, որ բժշկին կանչում են, երբ արդէն հիւանդը հոգեվարքի մէջ է և պահանջում են նրանից առողջացնել մեռնողին։

Եթէ հարցնում ես, թէ ինչի վաղ չը կանչեցիք, պատասխանում են, թէ մենք կարծում էինք, որ հիւանդութիւնը չնչին է։ Եթէ իրանք իրանց թոյլ են տալիս բժշկական դատողութիւն տալ, բժիշկը չէ կարող յարութիւն տալ։

Ձեզ մեղադրեցի ամենայն կողմից. մեղադրեցի և բժիշկներին։

Ուրեմն ինչ անենք, որ հիւանդը կարողանայ յաջող բժշկվել։ Ես ձեզ ցոյց կը տամ ճանապարհը, հեռևեցէք իմ խորհուրդներին և ինձնից միայն չնորհակալ կը լինէք։

Հասարակութեան մէջ տարածված է մի շատ վատ սովորութիւն, այն է հիւանդի վրա մի քանի բժիշկ փոխել, դրա հետևանքը շատ վատ է։

Եթէ ամենայն անգամ նոր բժիշկ է մտնում ձեր տուն, համոզված կացէք, որ նա առանձին ցաւակցութիւն չէ կարող ունենալ ձեզ համար, նա ձեզ չէ կարող սիրել։ Նա իր պարտքը կատարում է և գնում է, մանաւանդ երբ նա գիտէ, որ այդ մարդը խաբելու է նրան և թողնելու բժշկին առանց վարձատրութեան. եթէ բժիշկը երկրորդ անգամ այդ տունը մտնի, նա շատ յարգելի մարդ է. այսպէս բժիշկների թիւը շատ մեծ է։

Դուք գերդաստան ունէք մեծ կամ փոքր, հարկադրված էք լինում տարին մի քանի անգամ բժիշկ կանչել ձեր տուն։

Բռնեցէք մի բժշկի ձեռը, որին դուք լաւ և գիտուն էք համարում, նրան ձեռից մի՛ թողնի, նրա բոլոր պահանջները կատարեցէք անտրտունջ և ուրախութեամբ, նա ձեզ համար շատ հարկաւոր մարդ է, աշխատեցէք որ նա ձեր գերդաստանը սիրի, որ նա ձեր տուն մտնելուս կարծի թէ իր տունն է մտնում։

3) Բժիշկը կարծում էք պատիկ մարդ է, նա շատ մեծ է և զօրաւոր է, որովհետև ձեր ցաւը, երբեմն ձեր կեանքը նրա ձեռքին է։

4) Այն բժիշկը, որին դուք կընտրէք ձեզ համար, նա պէտք է լինի ոչ թէ միայն գիտուն, այլ և բարի, ազնիւ և բարոյական մարդ։ Նա իմանում է ձեր բոլոր հանգամանքները, որովհետև և պահանջում է, և երբեմն պէտք է ասէք այն, ինչ որ ձեր կինը կամ դուք խոստովանելուս նաև քահանային չէք ասում։ Նա գիտէ ձեր տան բոլոր գաղտնիքը։ Տանու բժիշկ ունենալու օգուտն այն է, որ նա ուսանում է տանեցոց մարմնի որպիսութիւնը ինչպէս առողջ, նմանապէս և հիւանդ ժամանակ, գիտէ ինչ հիւանդութիւններ են ունեցել տանը ցեղը, գիտէ ո՞ր դեղն է ինչպէս ազդել նրա վրա և այլն։ Ցայտնի է որ մի դեղ մէկին օգնում է, իսկ մի և նոյն դեղը միւսին՝ մի և նոյն հիւանդութիւն ունեցողին չէ օգնում կամ ուշ է ազդում։ Այս բոլոր բժշկական հաշիւները ի հարկէ հասարակութիւնը չը գիտէ. մենք բժիշկներս պարտաւոր ենք բացատրել, բայց ասողին լսող պիտի։

5) Տանու բժիշկը (բայց ոչ բոլոր բժիշկները) պէտք է լինի երեխայք սիրող մարդ, որ երեխայքն էլ նրան սիրեն, նրան ուրախութեամբ տեսնեն, նրան շուտ սովորեն, չը վախենան նրանից և իրենց տանուտէրը, իրենց բարեկամ համարեն։ Եթէ այս պայմանները կը կատարէք, այն ժամանակ երեխան ամեն հարցի կը պատասխանի, նրան քննելը, նրա ցաւն որոշելը և բժշկելը շատ կը հեշտանայ։ Բժիշկը այդ պատիկ մարդու բարեկամն է, նա նրանից չէ վախենում, այլ սիրով է ընդունում նրա բոլոր խորհուրդները և յաջող բժշկվում։

Մի քանի դերդաստանում, որտեղ ես լաւ ծանօթ եմ, տուն մտնելուս, տանը ցիր երբեմն ասում են երեխանց՝ սուս կաց, բժիշկը եկաւ. երեխային բժշկից վախեցնելը շատ վատ սովորութիւն է, կարծես թէ բժիշկը պէտք է «բօբօ» լինի երեխանց համար. ընդհակառակը, նրանք չը պէտք է վախենան բժշկից, բայց ես այդ երեխէրքի հետ լաւ ծանօթ լինելով, նրանք իրենց մօր ասածի վրա ամենևին ուշադրութիւն չեն դարձնում, և թուչտելով դալիս են մօտս, որովհետև ես նրանց հին բարեկամն եմ, նրանք ինչի պէտք է վախենան ինձանից։

6) Երբ դուք այնտեղ հասնէք, որ բժիշկը իրեն համարում է ձեր տան բարեկամ, այն ժամանակ գիշեր թէ ցերեկ, երբ հարկաւոր լինի, նա կանգնած կը լինի իր հիւանդ փոքրիկ բարեկամի անկողնու մօտ, որովհետև երկուսն էլ միմեանց սիրում են։ Ինչպէս թողնես մի փոքրիկ մարդու հիւանդ, առանց նրան տեսնելու և օգնելու, երբ նրան սիրում ես, ինչպէս չը սիրես նրան, երբ գիտես, որ նրա պէսներն են միայնակ ազնիւ մարդիկ։

Եթէ մի բժիշկ երեխաներին չէ սիրում, նրանց հետ վարվել չի գիտէ, նա տանու բժիշկ չէ կարող լինել, որովհետև երեխան սիրում է միայն այն մարդուն, ով որ նրան սիրում է։ Եթէ մի մարդ, որ երեխայ չէ սիրում, պատահում է գերդաստանում և ծնողներին հաճոյանալու կամ քաղաքավարութեան համար կանչում է գուրգուրելու երեխային, որ շատ տգեղ բան է, երեխան նոթերը կիտում է և չէ մօտենում նրան, թէպէտ և նրան արդէն մի քանի անգամ տեսել է, իսկ երեխայ սիրող մարդուն իսկոյն մօտենում է, կամ թէ շուտ է սովորում նրան և միշտ ժպտալով է հանդիպում այդ մարդուն։

7) Եթէ պատահեց, որ ձեր բժիշկը դժուարանում է հիւանդութիւնը որոշել, նա միշտ օգնութիւն կը կանչի իր ընկերոջ, իսկ եթէ դուք պահանջէք մի որ և իցէ բժշկի հետ խորհրդակցել ձեր հիւանդի մասին, նա ձեր պահանջը միշտ ուրախութեամբ կը կատարի, որովհետև իրեն օգուտը այդ է պահանջում։

8) Եթէ բժիշկը գիտէ, որ նա ձեզ համար թանգ չէ և դուք նրան արհամարհում էք, երբ նա ձեզ հարկաւոր չէ, բնականապէս նա ձեզ պէտք է արհամարհէ։

Աշխարհումս ամենայն բան փոխադարձաբար է, ուրեմն և հիւանդի և բժշկի յարաբերութիւնը փոխադարձաբար պէտք է լինի։ Բժիշկը հրեշտակ չէ, այնքան ինքնաղոհութիւն մի՛ պահանջի նրանից, նա մարդ է։ Նա ինչի համար ամենայն բոպէ պէտք է պատրաստ լինի ձեզ ծառայելու։

9) Տանու բժիշկ ունենալը և նրան առաջիկ տալը այնպէս հարկաւոր է գերդաստանի և ամեն մարդու համար, ինչպէս տան Նորոգելը (բէմօնտ) տան տիրոջ համար։ Ամենայն տարի պէտք է մի գումար մսխել և տունը պահպանել, որ փուլ չը գա և արդիւնք բերի, նմանապէս և ամենայն տարի իւրաքանչիւր գերդաստան պէտք է մի գումար նշանակէ իր մարմնի պահպանելու համար։ Դուք գիտէք, որ բժիշկները մեծ մասամբ զբաղված են, երբեմն յոգնած են և չեն կարող ձեր հիւանդի մօտ գալ և ձեր հիւանդը մնում է առանց բժշկի։ Եթէ կամենում էք, որ բժիշկը ձեզ համար միշտ պատրաստ լինի և յաջողակ բժշկէ, պէտք է հետևեալ կարգադրութիւնն անէք. եթէ մի քանի գերդաստան միանաք, կարող էք ամենաչնչին տարեկան տուրքով (ամեն մէկիցդ) ունենալ բժիշկ, որ միշտ պատրաստ կը լինի միայն ձեզ համար և հարկաւորութիւն չի ունենայ ոչ ծառայել, ոչ առանձին պրակտիկայի հետևից ընկնել, որովհետև ձեր տուածը նրա համար բոլորովին բաւականացուցիչ կը լինի և նա կարող է իր գործով և ձեզ համար աւելի խճմտանքով աշխատել։ Կարճ, պէտք է մի բժշկի ժողովուրդ դառնաք, ինչպէս մի եկեղեցու ժողովուրդ էք դրվում, որտեղ և մշտական ճաչակվում, կնքվում, աղօթում էք։ Այսպէս են անում եւրոպական գերդաստանները, որ օգտաւէտ է թէ իրենց և թէ բժշկին։

10) Բժշկին հարկադրել բժշկելու, անկարելի է, որովհետև և ոչ մի լաւ հետևանք չէք կարող ըստանալ, ուրեմն աշխատեցէք որ բժիշկը ձեր բարեկամը լինի, սիրի ձեզ, և նրանից միայն օգուտ կը տեսնէք։ Ես բացատրեցի ձեզ թէ ինչպէս պէտք է վարվել բժշկի հետ, ինչ նրանից պէտք է պահանջել և ինչ է բժշկի պահանջը։ Իմ միակ ցանկութիւնն էր տալ ձեզ օգտաւէտ խորհուրդներ։ Եթէ ձեզնից գոնէ մի քանիսին համոզեցի ընդունել իմ կարծիքներս, աշխատեցէք տարածել. այդ աւելի ձեր օգուտն է քան թէ բժշկինը։

Բժիշկ Լևոն Տիգրանեանց

մրգավաճառը աւելի արագութեամբ տալիս է յոգուտ ուսումնարանի կամ եկեղեցու քան թիւրքիացի վաճառականը, իսկ ժողովքի ժամանակ ամենից շատ պահանջողը և աղգասիրութիւն պռռացողը նոքա են, չը նայելով նրան, որ երկու աչակերտ չը կայ ռուսիացի, այնու ամենայնիւ ուսումնարան պահպանողը միայն նորեկ ռուսիացիներն են։ Իսկ նոցա միմեանց մէջ ունեցած խռովութիւնը և բամբասանքը որ ուսումնարանին և եկեղեցու օգտին վնաս են տալի, դորա մասին հարկաւոր է լռել, թող իրանք զգան ուսումնարանի հոգաբարձուները, որ ամենքը բաւականին հասկացող և ազնիւ երիտասարդներ են՝ որոշել են անխիր ընդունել բոլոր հայ անուն կրող զաւակաց՝ լինի կաթոլիկ, լութերական կամ մինչև անգամ մահմետական։ Իսկ մեր ուսուցիչը բաւականի արժանաւորներից է և Ներսիսեան ուսումնարանում մի ժամանակ ամենախղճմտաւոր վարժապետն էր։ Մնում է խնդրել մեր Բաթում բնակվող Թիւրքիացի հայ եղբարցը որ օգնեն հոգաբարձուներին և քահանային ևս սիրտ տալով չը խնայեն իրանց կօպեկը ազգի խեղճ զաւակաց ուսում տալու համար։

Արաէն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՆԻՍՏը

Յուլիսի 11/23 անգլիական պարլամենտի երեկոյեան նիստում Միսթր Բրէյս, որ մայրաքաղաքի Թաուէր-Համլէտս թաղի ազատամիտ ներկայացուցիչն է, հրաւիրում է պարլամենտի ուշադրութիւնը Փոքր-Ասիոյ և Հայաստանի վրա Բերլինի դաշնադրութեան 61-դ յօդուածի համեմատ և պահանջում է ցոյց տալ ամեն դիպլոմատիական գրութիւնները Հայաստանի, Փոքր-Ասիոյ և Սիւրիայի ազգաբնակութեանց վիճակի վրա։ Նա ասում է, Տաճկաստանի վիճակը անգոր է. տաճկական տէրութեան քայքայվելը միայն մի քանի տարիների խնդիր է. հարցը միայն դա է, թէ ովքեր պիտի բաժանեն իրանց մէջ այդ հողերը։ Այդ երկիրը պէտք է քրիստոնեաների և ոչ թէ մահմետականների ձեռքով կառավարվի։ Նա յոյս ունի թէ Անգլիոյ կառավարութիւնը ոչ թէ պետութեանց միջի համաձայնութիւնը կը պահպանէ և պետութեանց մէջ ծագող նախանձի ամեն առիթից խոյս կը տայ, այլ նա և իր ազդեցութիւնը և բարոյական ձնշումը կը գործադրէ պարտուպատշաճ նորոգութիւնները ներմուծանելու։ Սըր Կընէվէյ սատարում է ճառասացին ասելով, թող կառավարութիւնը վստահ լինի, որ ամեն որ և է բարոքմունք որ նա (կառավարութիւնը) ուզենայ մտցնել այն գաւառները, պարլամենտը կօժանդակէ։

Սըր Չարլս Դիլք շնորհաւորում է միսթր Բրէյսի ճառը, որի բովանդակութիւնը մեծաւ մասամբ համապատասխանում են իր գաղափարներին։ Վերջին լուրերին նայելով, որ Թագուհու կառավարութիւնը ստացել է Հայաստանից, այնտեղ տիրում են զեղծումներ, անիշխանութիւն (anarchie), իրաւանց ոտնահարում և կենաց ու ընչից անապահովութիւն։ Տաճկաստանի ասիական գաւառների վարչական զեղծումները ամենասաստիկ գոյներով էլ գրեթէ հնար չէ նկարել։ Ինչ որ վերաբերում է Բարձր Դրան վրա ձընշում գործածելուն, դա մինչև ցարդ միայն Անգլիան չէր անողը, այլ վեց պետութիւնները միասին։ Թէև նախընթաց ատենախօսին այս կէտը ծիծաղելի է երևում, բայց դա իրողութիւն է, որ յիրաւի Անգլիոյ կառավարութիւնը յաջողել է բոլոր պետութեանց մէջ կատարեալ համաձայնութիւն գտել։ Հէնց բուն այս պատճառով էլ սիպված է Տաճկաստանին բռնի գործադրել տալու նորոգութիւնների մասին քիչ խօսելու։ Մանրամասնութիւնները կարելի է միայն այն ժամանակ հաղորդել, երբոր մնացեալ 5 պետութիւնքն էլ համաձայն կը լինեն։ Լօրդ Սալսբըրիի սկզբնական պահանջները յայտնի են. բայց նա յետոյ մեղմացրեց նրանց, և պահանջում էր որ քուրդերի ձեռքից նեղված գաւառներում ժանդարմներ դնելով սկիզբն անէին։ Բայց Բարձր Դուռը ոչինչ չարեց և Հայաստանը այսօր առաւել շատ է չարչարվում քան թէ այն ժամանակ։ Երբեմն երբեմն այո՛, Թիւրքի կառավարութիւնը խօսք է բայց թողել նորոգութեանց մասին։ Երբոր 1879 կոմիսարները պէտք է գնային Փոքր Ասիոյ արևելեան կողմը, տեղական քրիստոնեայ ժողովրդի գանգատները քննելու, սըր Հենրի Լէյարդ առաջարկեց, որ այն կոմիսիոնին անգլիացի պաշտոնեաներ էլ մանակցէին. Բ. Դուռը չընդդիմացաւ դրան։ Բայց դմանէ մի տեղական խորհրդատու յանձնաժողով էլ է եղել, որ քննէ մտցնելի նորոգութիւնները։ Բայց Բ. Դուռը բացարձակապէս ոչինչ չէ արել։ Մի դէպք միայն ապացուցանում է թէ Բ. Դուռը որքան չնչին կարևորութիւն է ընծայում այն սկզբունքին, որը լօրդ Սալսբըրի այնքան կարևոր էր համարում։ Լօրդ Սալսբըրի պահանջել էր, որ Հայաստանում նորոգութիւններ մտցնելու մասին պէտք է որ տեղական կուսակալները մի քանի տարի շարունակ մնան իրանց պաշտօնում և ուրիշ տեղ չը կանչվեն, եթէ գործունեայ մարդիկ են։ Արեգդին փաշան պատուական պաշտօնեայ էր երևում, բայց դարձեալ շուտով ետ կանչեցին։ Նոյնական գրութեան պատասխանել է Բ. Դուռը։ Իր մէկ պատասխանում Բ. Դուռը կասկածում է անգլիական հիւպատոսների Հայաստանի ազգաբնակութեանց մասին տուած տեղեկութեանց ճշմարտութիւնը։ Սա խիստ ցաւալի է. այս դէպքում ստիպված է կառավարութիւը իր և միւս պետութեանց ձեռքը ստոյգ տեղեկութիւններ բերելու համար անմիջապէս կարգադրութիւն անելու, որ պարզ իմացվի թէ Հայաստանում ո՞ր ազգից ո՞րքան հոգի կայ։ Տաճկաստանը ուզում է միայն մէկ օրէնք դնել ամբողջ տէրութեան համար՝ ինչ ինչ փոփոխութիւններով այստեղ այնտեղ։ Բայց (Անգլիոյ) կառավարութիւնը այդ բանը անտեղի է համարում, որովհետև նա անհնարին է տեսնում մէկ օրէնքը բոլոր գաւառների համար։ Նոյնական գրութիւնը յանձնված է Բ. Դրան յունիսի 12-ին. դա հրաւիրում էր Բ. Դրան ուշադրութիւն դարձնել Բերլինի դաշնադրութեան 61 յօդ. վրա, բայց Բ. Դուռը պատասխան է տուել յուլիսի 7-ին, որ պարլամենտին պէտք է ներկայացնվի։ Բ. Դուռը իր պատասխանի մէջ մի քանի նորոգութիւններ է յիշում, որ կարելի էր մտցնել, օրինակ համայնքների լուծումը, ընդունակ և ազնիւ անձանց պաշտօն յանձնել առանց կրօնական խտրութեան, և այլն։ Բայց Թագուհու կառավարութիւնը չէ կարող այդպիսի ընդհանուր խոստումներով գոհ լինել. բայց մի քանի մասնաւոր պատճառներով չէ կարող հաղորդել հիմա, թէ սրա դէմ նա (Անգլիոյ կառավարութիւնը) ինչ քայլեր անել է որոշել։ Այդ քայլերը պէտք է միւս մեծ պետութեանց հետ համագործողութեամբ կատարվեն, վասնորոյ և անկարելի է այստեղ ներկայացնել պարլամենտին։

Միսթր Օնսլօ փափաքում էր իմանալ թէ արդեօք ոյժ ե՞ն գործածելու։ Սըր Լօսըն նըկատում է թէ ամեն կերպով պէտք է գուն գործէ չը թողուլ, որ Տաճկաստանի դէմ պատերազմական ցոյցեր անվեն։ Միսթր Բէյնբը կասկած է յայտնում Եւրոպայի համաձայնութեան անողականութեան մասին։ Միսթր Մը-Քօն վախենում է, որ եթէ Հայաստանում կառավարչական դրութիւնը չը վերանորոգվի, ռուսական խորագիտութիւնք (intrigue) կարող էին այնտեղ էլ, ինչպէս Եւրոպական Տաճկաստանում եղաւ, եղեռնագործութիւններ յարուցանել։ Միսթր Լաբուշէր զգուշացնում է կառավարութեանը, որ բանը մինչև այնտեղ չը հասցնեն որ այլևս ուրիշ ճար մնացած չը լինի, բացի ուրիշի օգնութեամբ կամ առանց նրան, Տաճկաստանի դէմ ոյժ գործածելուց։ Միսթր Ալմէդ-Բարթլբթ հակառակ է առաջարկութեան նրա համար, որ Բրիտանիոյ կառավարութեան կողմանէ անիրաւութիւն կը լինէր Դանիցը պահանջել Բերլինի դաշնադրութեան ինչ ինչ որոշումների իրագործութիւնները, մինչդեռ ոչինչ չէ լինում այն որոշումներից յօգուտ Տաճկաստանի եղողները կատարելու։

Միսթր Գլէդսթէն նկատում է թէ առաջ պէտք է ապացուցանել այդ Տաճկաստանի դէմ գործված անիրաւութիւնը քանի որ Տաճկաստանն ինքն արդէն իրան յանցաւոր է խոստովանում։ Նա զարմանում է թէ ինչպէս կրկին անգամ փորձ են փորձում այն խօսքերի համար, որ նա մի քանի ժամանակ առաջ խօսել է իբրև մի «աննշան մասնաւոր անհատ», երբոր դիմադրական խումբի անդամ էր, հիմա նրա վրա մի պատասխանատուութեան բեռ գլորել, որը միայն կառավարութեանն է պատկանում։ Կառավարութիւնը իրաց այս վիճակին մէջ բնաւ ստիպված չէ ասելու թէ ձնշելու քաղաքականութեան կը հետևի թէ ոչ. պարլամենտը պէտք է վստահաբար ընդունէ, որ կառավարութեան շահը պահանջում է, յայտնել իր քաղաքականութիւնը։ Եւրոպական համաձայնութեան նա երբէք մեծ կարևորութիւն չէ ընծայել, միայն սա է պնդել թէ առանց դրան մի բան չի լինի. իբրև մի վատ օրինակ նա յիշեցնում է անգլո-տաճկական դաշինքը։ Ճշմարիտ է Հայաստանի դրութիւնը դժուարութիւններ ունի. այն կարգադրութիւնները, որոնք պէտք է կատարվին, վերաբերում են բոլոր կրօնքների դաւանողներին։ Այս հակառակութիւնը նրան համոզեց որ պարլամենտի ամեն կուսակցութիւններն էլ նրան կօգնեն երբոր նա աշխատէ Տաճկաստանին բարենորոգութիւններ անել տալու։

Միսթր Բուրք, նախկին փոխ քարտուղար արտաքին գործերի, պաշտպանողական կառավարութեան ջատագով է հանդիսանում Գլէդսթընի յարձակմանց դէմ։ Նա հերքում է այդ վերջնոյ առածը իբր թէ անգլո-տաճկական դաշինքը գրգռել է Ֆրանսիայի նախանձը։ Նա հրաւիրում է կառավարութեանը, պարլամենտին ստոյգ տեղեկութիւն տալ, թէ ի՞նչ տեսակ ձնշում պէտք է գործադրվի Տաճկաստանի դէմ։ Անտարակոյս՝ մեծ են Հայաստանի դըժուարութիւնները. բայց դորանք պէտք է վերանան, եթէ ոչ հետևանքը ծանր կը լինի։ Նա կարծում է թէ հայերը և նոյն իսկ միւս տաճկական ցեղերն էլ աւելի շատ բան են սպասում Անգլիոյ ընթացքից քան մի որ և է եւրոպական համաձայնութիւնից։ Նա խոստանում է յանուն դիմադրական (Բիքոնսֆիլդի) կուսակցութեան, որ նրանք պատրաստ են կառավարութեանը ամեն հնարաւոր օգնութիւն անել, որ Տաճկաստանի յարաբերութիւնները մի կանոնաւորութիւն ըստանան։

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը։

Նորերումս անգլիական կառավարութիւնը ներկայացրեց պարլամենտին մի օրինագիծ իրլանդական հողերի կապալառուներին վարձատրելու մասին, որոնց իրլանդական կալուածատէրերը հեռացնում են իրանց հողերից։ Կառավարութիւնը առաջարկում էր իր օրինագծով վարձատրել երկրագործ կապալառուներին։ Ամենքը կարծում էին, որ նախագիծը կընդունվի, բայց պարլամենտը հերքեց նրան 282 ձայների բազմութեամբ 51 ձայնի դէմ։ Կառավարութիւնը անդադար մատնացոյց էր լինում այն վտանգների վրա, որոնք կարող էին առաջանալ այդ օրինագծի մերժելուց, բայց պահպանողական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ։ Հեռագիրը հաղորդում է, որ լօրդ Բիկօնսֆիլդ չափազանց ընդդիմանում էր օրինագծի ընդունելուն։

Եթէ ճշմարիտ նախկին մինիստրութեան առաջնորդի ազդեցութիւնն էր պատճառ, որ օրինագիծը մերժվեցաւ, այս անգամ էլ լօրդ Բիկօնսֆիլդ առանձին լաւութիւն չառաւ իր հայրենիքին։ Այդ օրինագծի մերժելու առիթով կարող է պարլամենտը զղջալ, որ հետևեց Բիկօնսֆիլդի խորհուրդներին, որովհետև կառավարութիւնը իր օրինագծով կամենում էր առաջն առնել այն հողային շարժմանը, որ վերջին ժամանակներում նկատվում է Իրլանդիայի մէջ։

Աֆգանիստանի մէջ վերջին ժամանակներում պատահած անցքերի սկզբնապատճառն էլ նոյն լօրդ Բիկօնսֆիլդն է, որի խորհուրդներին այժմ հետևեց լօրդերի ժողովը։

Այս տխուր անցքերի մասին այժմ մտածում է ամբողջ Անգլիան։ Աֆգանիստանի մէջ պատահած անցքերի մէջ ոչ թէ միայն աֆգանական գործերը, այլ և նոյն իսկ Հընդկաստանի շահերը մեծ դեր են խաղում։ Գեներալ Բեօրուայի յաղթվելը առիթ տուեց անգլիական մամուլին ուշադրութիւն դարձնել լօրդ Բիկօնսֆիլդի ստեղծած աֆգանական հարցի դրութեան վրա։ Այդ հարցը հետաքրքրում է անգլիացիներին ոչ թէ միայն Աֆգանիստանի, այլ և Հնդկաստանի վերաբերութեամբ։

Ամենը իմացող և նախատեսող «Times» լրագիրը հարկաւոր համարեց բարձրացնել մինչև անգամ այն հարցը, թէ Անգլիայի ոյժի և բարօրութեան պահպանելու համար որքան անհրաժեշտ է Հնդկաստանի պահպանելը զոնէա այն պայմաններով, որոնցով նա այժմ շրջապատված է։ Լրագիրը այն եզրակացութեան է հանում, որ աշխարհի մէջ կատարվող բոլոր անցքերը Անգլիայի համար այն ընդհանուր յատկութիւնն ունեն, որ նա իսկոյն իր բոլոր ուշադրութիւնը Հնդկաստանի վրա է դարձնում։

Ռուսաստանի կողմից Ասիայում կամ Եւրոպայում արած ամենափոքր քայլի ժամանակ ասում է «Times», մենք այն եզրակացութեան ենք հանում, որ նա իր նախանձոտ հայեացքները Հնդկաստանի վրա է գցում։ Եթէ մեր զօրքերը մի տեղ յաղթվում են, մենք իսկոյն հարց ենք դնում, թէ ինչ ազդեցութիւն կը գործէ մեր յաղթվելը Հնդկաստանցիների ուղեղների վրա։ Որտեղ և ինչ որ պատահում է, ամեն բան բացառապէս Հնդկաստանի վերաբերութեամբ է գնահատվում։»

Հնդկաստանին սպառնացող վտանգի մասին յայտնած ամենաչափազանցացրած միտքը Անգլիայի մէջ միշտ կողմնակիցներ է գտել։ Դժուար է հաշուել այն բոլոր զոհաբերութիւնները, որոնց արել է Անգլիան, երբ երկիւղ է կրել կորցնել իր ազդեցութիւնը Գանգեսի ափերի վրա։ Նոյն իսկ աֆգանական պատերազմի պատճառը այդ երկիւղը դարձաւ։ «Times» լրագիրը հասնում է հետևեալ իրաւացի եզրակացութեանը։ «Անգլիան վերջապէս պէտք է դրական պատասխան տայ հետևեալ հարցին. արդեօք նրա բռնած դիրքը Հնդկաստանի մէջ արժէ՞ այդ բոլոր զոհաբերութիւններին»։

Գլադստօնի հիւանդութեան մասին լրագիրներին հաղորդում են, որ հիւանդութեան կրիսիկական դրութիւնը անցել է և որ նա հեղհեղուկ լաւանում է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՆՐՄԱՅՍ ՄՆԱՅԽԲԵԱՆԻ

«ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Թիֆլիս-կուկիայում Ալէքսէյևսկի փողոցի վերայ Ռոստոմ Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկսուին նորեկների քննութիւնները և ընդունելութիւն. ուսումնարանն ընդունելու է գիշերօթիկ և կիսաթօշակ աշակերտներ:

1—6 (2)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆԴՊՐՈՑԻՑ-

Առաջիկայ $18^{80}/_{81}$ ուսումնական տարին, ցանկացողների համար Սեմինարիա (վարժապետական դպրոցը) մտնելու, կան 4 վականսիաներ պատրաստական դասատան և 6 վականսիաներ առաջին դասատան մէջ: Խնդիրքները ընդունելութեան մասին տրվում են մինչև 15 օգոստոսի: Մրցողական հարցաքննութիւնները կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն ամսի 25:

3—3 (1)

Ծախվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՑԻ ՍԵՂԱՆ և ԱԹՈՌՆԵՐ: Ելիսավետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

5—5

Նուտով լոյս կը տեսնէ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՅՆԱԳՐԱԾ ժողովրդական գործածական երգերի

Երկրորդ տետրակը

Ձայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուգամաձեանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Ազնիւ ընկեր մեռանում եմ»
2) Ակնապիշ անձայն»
3) «Բաժակներ առնունք, եղբա՛րք»
4) Մեր հայրենիք, թշուառ անտէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի րուբլի. ցանկացողները ստանալ դաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Ցուրտը փչեց» և 4) «Ծիծեռնակ» պէտք է ուղարկեն մի րուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է Նոր ԵՐԳԱՐԱՆ ՖՐԷՅԴՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆրէյտունի նոր երգարանը, պէտք է ուղարկեն մէկ րուբլի և 30 կոպկ. հետևեալ հասցէով: Въ Тифлисъ· Ивану Артемьевичу Сузанаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Համեմատեցէք անգլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. փունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի փունտը 2 րուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

46—100

Գայանեան և Ներսէսեան դպրոցների ուսուցիչ պ. Վարձելեանը իր գերդաստան մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ գիշերօթիկ աշակերտուհիներ: Դիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեանը:

2—5

ՁԱՆՁՈՒՂԱՁՕՎԻ ՄԵԾ ՄԱՂԱՁԻՆՈՒՄ շարունակվում է վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրի, թէ բակում և թէ մաղազինում:

1—4



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոգիստների մօտ գլխաւոր դէպօ Նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտօրալնի փողոց, № 5. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է ըզգուշանալ խարդախումներից.

17—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վեներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրօվ վեներական և բողազի հ., Րէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վեներական և բողազի հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրօվ վեներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԵՒ ԾԱԽՎՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԷՍ ՆՈՅՆ ՏԵՂԸ:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիզի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսոյթ և մէկ պատկերներով, գինն է . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

19—20

Ալէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Ասատուր Խաչակեանց.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դժակելի տան վերին յարկը Գանօվսկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում մասն ունի տարածից այն 20 համարների, որոնք ցոյց են տրված վկայականի մէջ չորս տիրաժների: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կօմիսիայով ծախում է ապրանքներ և նիւթեր: Ծախում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դատարկ տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը $4^1/_2$%, պայմանաւոր $5^1/_2$%, 2) տուրքերին 6 ամսով $5^1/_2$%, 9 ամսով $6^1/_2$%, 1 տարով $7^1/_2$% $1^1/_2$ տարով 8%½, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կարգի պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

10—10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միրիմանեանց

Ցուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստած հանքային զանազան ՋՐԵՐ:

31—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ, հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ Էնֆիանջեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

7—22

ՄԻՆԱՍ ԳԻՒԼՋԱՏԵԱՆ, որ կանտօրայ ունի ԹԱՒՐԻԶ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կօմիսիօնով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

5—5